ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում **23.07.2015թ** տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին

Ս.Սահակյան **ՀՀ Արագածոտնի մարզպետ**
Ն. Մովսիսյան **մարզպետի տեղակալ**
Մ Աբգարյան **մարզպետի տեղակալ**
Հ.Գևորգյան **մարզպետարանի աշխատակազմի ղեկավար**
Ա .Սողոմոնյան **ՀՀ ՏԿԱԻ նախարարության համայնքային ծառայության հարցերի վարչության պետ**
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ
Ա.Հարությունյան **Առողջապահական պետական տեսչության Արագածոտնի մարզային կենտրոնի պետ**
Ա Մանուկյան **ՀՀ ԱԻՆ Արագածոտնի փրկարարական վարչության պետ**
Մ.Պողոսյան **ԱՌՆԱՊ-ի տնօրեն**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՀՀ Արագածոտնի մարզի խորհրդի նիստի

23.07.2015թ. **ժ. 11.00**

1. Մարզի համայնքների բյուջեների կատարման և սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի մասին /զեկ.՝ մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն.ԳԱԼՍՏՅԱՆ/:

2. ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում 2015 թվականին իրականացված վարչական վերահսկողության արդյունքների մասին ամփոփ տեղեկատվություն /զեկ.՝ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ/:

3. Մարզի համայնքներում գործող մանկապարտեզներում սննդամթերքի ձեռքբերման, գնումների իրականացման, անկախ հանձնաժողովների ձևավորման և պարբերաբար ուսումնասիրություններ կատարելու գործընթացի մասին /զեկ.՝ մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն.ԳԱԼՍՏՅԱՆ/:

4. Մարզի համայնքներում գույքահարկից ազատման մասին ավագանիների կողմից ընդունված որոշումների մասին /զեկ.՝ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ/:

5. Ոռոգման ջրի և բնակչությանը տրվող որակյալ խմելու ջրի հետ կապված կազմակերպչական հարցեր /Զեկուցողներ՝ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱՋԱՏՅԱՆ, քաղաքաշինության վարչության պետ Ա. ԴԱՎԱՅԱՆ/:

6. Հայտարարություններ

Մարզպետ Սարգիս Սահակյանը ներկայացրեց օրակարգը՝ նշելով, որ բոլոր հարցերն էլ հրատապ են, և դրանց լուծման համար ընդհանուր քննարկման անհրաժեշտություն կա: Զեկուցող մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն.Գալստյանը ներկայացրեց նշված հարցի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը: Ըստ այդմ, 2015թվականին սեփական եկամուտների պլանը 996,7 մլն. դրամ է, որից 6 ամսում հավաքագրվել է 365,6 միլիոն դրամ, կամ՝ 36,7 %-ով: Այդ թվում՝ Հողի հարկի հավաքագրումը կազմել է 31,7, գույքահարկը՝ 41,3, հողի վարձավճարը՝ 33,0 %: Ընդհանուր առմամբ 2014-թ-ի նկատմամբ այս ժամանակահատվածում 0.7%- ով ավել է հավաքագրվել: Ն.Գալստյանը ներկայացրեց բյուջեների կատարման և սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի արդյունքները ՝ըստ տարածաշրջանների:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. Հովսեփյանը ներկայացրեց ,որ վեց ամսվա ընթացքում 20 համայնքում իրականացվել է վարչական վերահսկողություն, որի արդյունքների արձանագրված խախտումների վերացման համար կատարվեցին անհրաժեշտ պարզաբանումներ : Ս.Հովսեփյանը անդրադարձավ համայնքների ավագանու որոշումներին վերաբերվող խաղտումների և օրենքի կիրառման հարցերին: Քննարկվեցին հաև խորհրդակցական մարմինների, գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեության հետ կապված հարցեր: Ներկաները տեղեկացան, որ համայնքների մանկապարտեզներում ուսումնասիրություններ են կատարվում: Անդրադառնալով այս խնդրին, մարզպետն ասաց, որ ոլորտի գործունեությունը բարելավերու համար համայնքներում ստեղծվելու են անկախ հանձնաժողովներ, որոնք մշտապես հետևողական են լինելու մանկապարտեզներում գնումների, սննդի կազմակերպմանը: Այդ գործընթացների թափանցիկությունն ապահովելու համար, մանկապարտեզների օրվա խտացված ռեժիմը, պայմանագրերը փակցվելու է տեսանելի վայրերում: Իսկ մարզպետի կողմից ստեղծված հանձնաժողովը համակարգում ուսումնասիրությունները շարունակելու է պարբերաբար: Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. Ազատյանի և քաղաքաշինության վարչության պետ Ա. Դավայանի ելույթից հետո Սարգիս Սահակյանը ընդգրկուն անդրադարձ կատարեց ոռոգման ջրի և բնակչությանը տրվող որակյալ խմելու ջրի հետ կապված կազմակերպչական հարցերին: Նա նշեց, որ ոլորտում առկա հիմնախնդիրները առաջնային լուծում են պահանջում, և ամենօրյա հետևողական աշխատանք է տարվում այդ ուղղությամբ: Մարզի ղեկավարը մշտապես այցելում է համայնքներ, տեղերում հստակեցվում են ջրամատակարարման ծավալներն ու ժամանակացույցը:

Ջրամատակարարման հարցի վերաբերյալ հայտարարություններով հանդես եկան ԱՌՆԱՊ-ի տնօրեն Մ. Պողոսյանը, Առողջապահական պետական տեսչության Արագածոտնի կենտրոնի պետ՝ Ա.Հարությունյանը:

Սարգիս Սահակյանը անդրադարձավ քննարկված բոլոր հարցերին: Նա նշեց սեփական Հկամուտների հավաքագրման, ինչպես նաև համայնքների ղեկավարների կողմից օրենքների շրջանակներում իրենց գործունեությունը կազմակերպելու կարևորությունը, ինչը պետք է լինի նրանց ամենօրյա ուշադրության ներքո:Մարզպետի կողմից Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին տրվեց հանձնարարականներ քննարկված հարցերի վերաբերյալ:
Մարզխորհրդի նիստում հարցադրումներ կատարվեցին համայնքապետերի կողմից, որոնց տրվեցին համապատասխան պարզաբանումներ:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ